ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Լիլիթ Արամյանը, Սոֆիա Խաչատրյանը, Էմմա Մարգարյանը, Գոռ Մեծոյանը, Վարդան Պապյանը, Ներսես Պետրոսյանը, Նարեկ Ստեփանյանը, Նարինե Օզնեցյանը

<u>Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Ստելլա Բադալյան, Գրիգոր Հալլաբյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթեվոսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը</u>

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ Նոր Հաճընն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 22-ի հերթական թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընն համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

2. Նոր Հաճընի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին

3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

4. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

5. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքի « Քանաքեռավանի մանկապարտեզ » համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին

7. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքի « Մրգաշենի մանկապարտեզ » համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր հաճընի համայնքի « Նոր Հաճընի համայնքապետարանի մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին

9. Նոր Հաճընի համայնքի սուբվենցիայի ծրագրային հայտերին հավանություն տալու մասին:

10. Նոր Հաճընի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1–ին հոդվածին համապատասխան

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում կատարել լրացումներ՝ համաձայն 1-4 հավելվածների (հավելվածները կցվում են):

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 12-րդ կետի և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի գյուղի վարչական տարածքում գտնվող, <<Նուվո Վիլաժ>> ՍՊԸ-ին սեփականության պատկանող 07-048-0270-0158 ծածկագրով

25.71207հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 12-րդ կետի և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով Արգիշտի Նորայրի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 07-064-0355-0057 կադաստրային ծածկագրով 1.08821հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, արոտավայր հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնապահական տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական

հանձնաժողովի>> 01.02.2023թ. թիվ 3 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Արամ Դավթյանի դիմումը և վերջինիս սեփականության իրավունքով պատկանող, Նոր Հաճըն համայնքի Արգել գյուղում գտնվող 07-014-0018-0022 կադաստրային ծածկագրով 0.2884հա գյուղատնտեսական հողերից 0.05197հա-ի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավանի գյուղի 12 փողոցի 1 հասցեում գտնվող անշարժ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն գույքը (կադ. ծածկագիր՝ 07-064-0127-0088) անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի « Քանաքեռավանի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:

3. Հանձնարարել Նոր Հաճըն համայնքի « Քանաքեռավանի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել որոշման կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ՄՐԳԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճըն համայնքի Մրգաշեն գյուղի 2 փողոցի 1- ին փակուղի 2 հասցեում գտնվող անշարժ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն գույքը (կադ. ծածկագիր՝ 07-046-0012-0023) անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Կոտայքի մարզի « Մրգաշենի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:

3. Հանձնարարել ՀՀ Կոտայքի մարզի « Մրգաշենի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել որոշման կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքի Ե. Չարենց փողոցի 8 հասցեում գտնվող անշարժ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն գույքը (կադ. ծածկագիր՝ 07-006-0031-0002) անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի « Նոր Հաճընի համայնքապետարանի մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:

3. Հանձնարարել Նոր Հաճըն համայնքի « Նոր Հաճընի համայնքապետարանի մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել որոշման կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Նոր

Հաճըն համայնքի ավագանին որոշում է. Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Տալ հավանություն Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավանի արվեստ դպրոցի կառուցում,Նոր Հաճըն համայնքի համայնքապետարանի շենքային պայմանների բարելավում և հարակից զբոսայգու կառուցման աշխատանքներ,Արգել գյուղի մանկապարտեզի 2- րդ մասնաշենքի հիմնանորոգում աշխատանքների 2- րդ փուլ,Նոր Գեղի , Նոր Արտամետ և Քանաքեռվան գյուղերի շենքերի նոր տանիքների կառուցում և մուտքերի վերանորոգում սուբվենցիայի ծրագրային հայտերին և ներկայացնել դրանք Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Նոր Հաճըն համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 15 -ը՝ ժամը 16:00: 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը